ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 44/09

Քաղ. Երևան 23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հունվարի 23-ի նիստում (արձանագրություն № 67/1) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ.Մանուկյանի 2009թ. հունվարի 8-ի բողոքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ SOREMARTEC S.A. (BE) ընկերության KINDER FRUIT SANDWICH (IR 917618) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. հոկտեմբերի 1-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և 3-րդ կետի «ա» ենթակետերի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 90.1-ին, 90.8-րդ և 90.20-րդ կետերի համաձայն, KINDER FRUIT SANDWICH (IR 917618) բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում 29-րդ և 30-րդ դասի հայտարկված ապրանքների նկատմամբ 2008թ. փետրվարի 27-ի նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ, համարելով, որ նշանը չի կարող գրանցվել նշված դասերում, քանի որ այն նկարագրական է, նշում է ապրանքի տեսակը և պարունակում է կեղծ և սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություն ապրանքի վերաբերյալ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են: Բողոքարկողը համարում է, որ 29-րդ դասի ապրանքների համար KINDER FRUIT SANDWICH ապրանքային նշանը ամենևին էլ նկարագրական բնույթի չէ, քանի որ «FRUIT SANDWICH» արտահայտությունը մտացածին է և, որպես այդպիսին, չի մատնանշում ապրանքը: Ինչ վերաբերում է 30-րդ դասի ապրանքներին, ապա բողոքարկողը կարևոր է համարում նշել, որ հայտատուն՝ SOREMARTEC S.A. ընկերությունը, ՄՍՀԿ ուղարկած իր դիմումով խնդրարկել է հայտարկված ապրանքային նշանի ապրանքների ցանկի սահմանափակում, այն է՝

ցանկից հանել ԱԾՄԴ 30-րդ դասի բոլոր ապրանքները, բացի «թխվածք, քաղցրավենիք» ապրանքներից: Այդ դեպքում ապրանքային նշանը մոլորության մեջ չի գցի սպառողին ապրանքի վերաբերյալ, այլ կակնարկի միայն, որ առաջարկվող թխվածքը կամ քաղցրավենիքը մրգային է:

Բերելով իր փաստարկները, բողոքարկողը խնդրել է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և տարածել SOREMARTEC S.A. (BE) ընկերության KINDER FRUIT SANDWICH (IR 917618) ապրանքային նշանի գրանցման գործողությունը ՀՀ տարածքում:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը գտնում է, որ հաշվի առնելով հայտատու SOREMARTEC S.A. (BE) ընկերության խնդրանքով ԱԾՄԴ 30-րդ դասի ապրանքների ցանկում կատարված սահմանափակումը, որի մասին նշվել է բողոքում, ինչպես նաև ավելի ուշ՝ 03.10.2008 թվականին ROMARIN ապրանքային նշանների միջազգային գրանցումների հիմնապաշարում ԱԾՄԴ դասերի քանակի կրճատման և 29-րդ դասը հանելու մասին կատարված գրառումը, փորձաքննության կողմից KINDER FRUIT SANDWICH (IR 917618) ապրանքային նշանի գրանցման մերժումը օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետեի «գ» և 3-րդ կետի «ա» ենթակետերի և կարգի 90.1-ին, 90.8-րդ և 90.20-րդ կետերի հիմքերով արդեն կիրառելի չէ: Հետևապես, KINDER FRUIT SANDWICH (IR 917618) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման 30-րդ դասի «թխվածք, քաղցրավենիք» ապրանքների մասով, և նշանի գրանցման գործողությունը պետք է տարածվի Հայաստանի Հանրապետությունում այդ ապրանքների նկատմամբ:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել SOREMARTEC S.A. (BE) ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել KINDER FRUIT SANDWICH (IR 917618) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2008թ. հոկտեմբերի 1-ի կրկնական փորձաքննության որոշումը ԱԾՄԴ 30-րդ դասի «թխվածք, քաղցրավենիք» ապրանքների մասով և KINDER FRUIT SANDWICH (IR 917618) ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետությունում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան